ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐԻ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1970-ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՆՈՒՆ ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԻ, ԸՆԴԴԵՄ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ *

ՀՏԴ 94(560):329.17:323.28 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-76*

ԹԱՄԱՐԱ ԱՂԱՄԱԼՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի աշխատակից, հայցորդ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tomaghamalyan@yahoo.com
ORCID: 0009-0009-9776-2047

Սույն հոդվածի նպատակն է վերհանել և ներկայացնել Թուրքիայում 1970-ական թթ. «Գորշ գայլերի»՝ մասնավորապես Ազգայնական շարժում կուսակցության և վերջինիս վերահսկողության տակ գործող երիտասարդական կազմակերպությունների ահաբեկչական գործունեությունը, որն ուղղված էր հատկապես կոմունիստական կազմակերպությունների ակտիվ գործունեության դեմ:

Նշված նպատակին հասնելու համար ուսումնասիրության խնդիրներն են՝ ուսումնասիրել քննարկվող ժամանակաշրջանում թուրք ազգայնականության ծայրահեղական՝ պանթյուրքիստական գաղափարախոսությունը ներկայացնող Ազգայնական շարժում կուսակցության անմիջական ներգրավվածությունն ահաբեկչական գործողություններին, հստակեցնել այդ գործողությունների իրական դրդապատճառները, նախադրյալներն ու հետևանքները, ցույց տալ գաղափարախոսության ազդեցությունը թուրք ազգայնական երիտասարդների շրջանում, ինչպես նաև լուսաբանել վերջիններիս կարևորությունը Ազգայնական շարժում կուսակցության համար:

Աշխատանքը շարադրված է կուսակցական փաստաթղթերի, բազմալեզու գիտական վերլուծությունների, մամուլի, ինչպես նաև թեմային առնչվող նյութերի համադիր քննության մեթոդով, պատմավերլուծական սկզբունքների մոտեցումներով:

Հոդվածն ամրագրում է, որ Ազգայնական շարժում կուսակցությունը՝ Ալփարսլան Թյուրքեշի գլխավորությամբ, սկզբնական շրջանում օգտագործում էր կուսակցության վերահսկողության տակ գործող երիտասարդական կազմակերպություններին երկրում ձախակողմյան ուժերի տարածմանը

* Հոդվածը ներկայացվել է 29.05.2023թ., գրախոսվել՝ 25.06.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

խոչընդոտելու համար: Սակայն ժամանակի ընթացքում «Գորշ գայլերի» առաջնորդը բռնության գործիքայնացումը կիրառեց ոչ միայն կոմունիստական գաղափարախոսության տարածման դեմ, այլև երկրում քաոսային իրավիճակ ստեղծելով, փորձեց հասնել իշխանության:

Հիմնաբառեր՝ *Թյուրքեշ, ԱՇԿ, պանթյուրքիզմ, կոմունիզմ, «Գորշ գայլեր», ահաբեկչություն, ազգայնականություն:*

Ներածություն

Վերջին վեց տասնամյակների ընթացքում Թուրքիայում հստակ նկատելի է թուրք ազգայնականության ծայրահեղական՝ պանթյուրքիստական գաղափարախոսության ծավալում, որը երկրի ներքին և արտաքին քաղաքական հարթակներում ժամանակ առ ժամանակ դառնում է գերակա ուղղություն: Այս հանգամանքը մեծապես պայմանավորված է Թուրքիայի քաղաքական կյանքում իր ուրույն տեղը զբաղեցնող պանթյուրքիզմի գաղափարախոս՝ Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ, Milliyetçi Hareket Partisi, MHP) ակտիվ դերակատարությամբ: Կուսակցության գործունեության առանձնահատկությունները հասկանալու համար հատուկ նշանակություն ունի վերջինիս պատմության կարևորագույն շրջաններից մեկի՝ 1970-ական թթ. ուսումնասիրությունը: Հենց այս ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն սկսեցին ազգայնամոլական շարժման առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի պանթյուրքիստական կառույցները՝ գրոհայինների ճամբարները և գաղափարապաշտների օջախները: Մանրամասն հյուսված աստիճանակարգային ցանցը, որի մեջ մտնում էին թե՛ ԱՇԿ, թե՛ երիտասարդ «գաղափարապաշտների» կազմակերպությունները, թե՛ Ա. Թյուրքեշի վերահսկողության տակ գործող զինված ջոկատները, անվանվում են «Գորշ գայլերի» (bozkurtlar) հասարակական-քաղաքական շարժում:

1970-ական թթ. Թուրքիայում առկա էին սոցիալ-տնտեսական և քաղաքական լուրջ դժվարություններ, որոնք կարճ ժամանակ անց վերաճեցին անօրինակ տնտեսական և քաղաքական ճգնաժամի: Սրան զուգընթաց՝ երկրում սկիզբ առավ լայնածավալ ահաբեկչության մեծ ալիք, որն ընդգրկեց գրեթե ողջ Թուրքիան: 1976-1980 թթ. ընթացքում հարյուրավոր ահաբեկչական գործողությունների և փողոցային անվերահսկելի բռնարարքների հետևանքով Թուրքիայում զոհվեց 5042 մարդ (Sayari 201): Բռնության կայուն աճը սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի պայմաններում խաթարեց երկրի երերուն ժողովրդավարական համակարգը՝ ճանապարհ հարթելով 1980 թ. սեպտեմբերի ռազմական հեղաշրջման համար:

Թուրքիայում ահաբեկչական գործողությունների հիմնական դերակատարներն ու շարժիչ ուժը ավագ դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանող ձախակողմյան ծայրահեղական, ինչպես նաև աջակողմյան ազգայնամոլական երիտասարդներն էին: Վերջիններս վերահսկվում և ուղղորդվում էին ԱՇԿ-ի կողմից՝ համախմբվելով կուսակցության առաջնորդ Ա. Թյուրքեշի պանթյուրքիստական գաղափարախոսության շուրջ: Ծայրահեղ ազգայնական գաղափարաբանական հենքով երիտասարդական այդ խմբերի առաջնային նպատակը պանթյուրքիզմի տարածումն էր Թուրքիայում և ակտիվացող ձախերի՝ կոմունիզմի դեմ պայքարը:

Պանթյուրքիզմի արտացոլումը ԱՇԿ քարոզչությունում

1961 թ.՝ Սահմադրության ընդունումից հետո, Թուրքիայում ձևավորվեցին աշխարհայացքային տարբեր մոտեցումներ և տեսլականներ ունեցող բազմաթիվ կուսակցություններ, կազմակերպություններ և խմբավորումներ: Քաղաքական տարբեր գաղափարախոսությունների ազդեցության հետևանքով Թուրքիայի հասարակությունը բաժանվեց երկու հիմնական ճամբարների՝ ձախերի և աջերի: Աջ

շարժման առաջատար ուժերից ամենաազդեցիկը Սուլեյման Դեմիրելի գլխավորած Արդարություն կուսակցությունն էր (ԱԿ, թուրք.՝ Adalet Partisi, AP): «Կոմունիստական վտանգով» պայմանավորված՝ 1960-ական թթ. կեսերից ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել նաև թուրք ծայրահեղ ազգայնականները, որոնք հիմնականում համախմբված էին ԱՇԿ-ի շուրջ[1]:

ԱՇԿ-ի գաղափարախոսությունը հիմնված էր Ա. Թյուրքեշի[2] կողմից կազմված 9 սկզբունքների՝ լույսերի վրա (9 ışık)[3]: Ըստ Թյուրքեշի՝ «որպեսզի հնարավոր լինի պաշտպանել վերջին անկախ թուրքական պետությունը, անհրաժեշտ է համախմբվել որևէ ազգային հայեցակարգի շուրջ»: Այդ հայեցակարգի հիմնադրույթները Թյուրքեշն ամփոփում է իր «9 լույսեր» աշխատությունում՝ հիմնվելով «թուրք ազգի պատմության և մշակույթի գերակայության համոզմունքի վրա» (Türkeş 20): ԱՇԿ-ի գաղափարախոսության հենքը դարձավ թուրք ազգայնականության առավել ծայրահեղական՝ պանթյուրքիստական ուղղությունը, վերջնական նպատակը՝ Թուրքիայի դրոշի տակ ողջ թյուրքական աշխարհի միավորումը:

Պանթյուրքիզմի տարածումն ու կոմունիզմի դեմ պայքարը 1970-ական թթ. հռչակվեց ԱՇԿ-ի քաղաքականության հիմնական ուղենիշ: Դեռևս 1969 թ. Միլլիեթ թերթում հրապարակված ելույթում Թյուրքեշն ամրագրեց. «Ուղին, որ նախանշել ենք, թուրքական ազգայնականությունն է. հարյուր տոկոսանոց հայրենի և ազգային հայեցակարգ: Մենք ամեն ինչ կանենք, որ մեր երիտասարդների համար այն դառնա կենսակերպ, որպեսզի նրանք զերծ մնան կոմունիզմի ազդեցությունից» (Kıdal 98): Զարգացնելով իր այս տեսակետը՝ Թյուրքեշը 1975 թ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի իր ելույթում հայտարարեց. «Կոմունիզմը սպառնալիք է մեր ազգին և պետությանը: Այն օտար գաղափարախոսություն է՝ միտված որսալու հատկապես մեր երիտասարդներին և մտավորականներին: Գաղափարներին կարելի է հաղթել միայն գաղափարներով: Միայն ոստիկանական կամ զինված ուժերով հնարավոր չէ այս օտար գաղափարախոսության տարածումը կասեցնել: Մենք գտնվում ենք կոմունիստական գաղափարախոսության հետ առերեսվելու եզրին» (Cumhuriyet Senatosu, 478):

Թյուրքեշի համոզմամբ՝ այդ գաղափարախոսությունը ներդրված էր կազմաքանդելու թուրք ազգայնականությունը, մասնատելու և ջլատելու թուրք ազգը (Anadol 15):

Ուստի ձախակողմյան կազմավորումների ընդլայնմումը կանխելու և զուգահեռաբար պանթյուրքիզմի տարածումն ակտիվացնելու նպատակով՝ ԱՇԿ Թյուրքեշի գլխավորությամբ՝ ձեռնամուխ եղավ գրոհայինների ճամբարների[4] և

---

1 1965 թ. Ալփարսլան Թյուրքեշն իր մի շարք համախոհների հետ անդամակցում է ՀԳԱԿ-ին և կարճ ժամանակ անց դառնում է կուսակցության նախագահ: 1969 թ. այն վերանվանվում է Ազգայնական շարժում կուսակցություն՝ ԱՇԿ:

2 Ալփարսլան Թյուրքեշը (Ալի Արսլան) ծնվել է 1917 թ. Կիպրոսի Նիկոսիա քաղաքում: 1933 թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Ստամբուլ, որտեղ 1938 թ. ավարտել է ռազմական ակադեմիան՝ որպես հետևակային լեյտենանտ: 1944 թ. պանթյուրքիստական հայացքներ տարածելու համար ազատազրկման է դատապարտվել (9 ամիս 10 օր): 1955 թ. Պենտագոնում նշանակվել է ՆԱՏՕ-ի Թուրքական ներկայացուցչության հանձնաժողովի անդամ: 1969-1997 թթ. ղեկավարել է Ազգայնական շարժում կուսակցությունը: (Ա. Թյուրքեշի գործունեության մանրամասները տե՛ս Yalçın 2019; Tombuloğlu 9-24):

3 1967 թ. նոյեմբերի 24-25 կայացած ՀԳԱԿ համագումարում, որպես կուսակցության պաշտոնական գաղափարարախոսություն, ընդունվում է Ա. Թյուրքեշի՝ 16 էջից բաղկացած գրքույկը՝ «9 լույսերը» (Dokuz Işık), որն առաջին անգամ տպագրվել էր 1965 թ. Ստամբուլում: (9 լույսերի մասին առավել մանրամասն տե՛ս Türkeş 2010):

4 1960-ական թթ. վերջին ծայրահեղ ազգայնական գաղափարների հիման վրա ստեղծվեցին ՀԳԱԿ կողմից կառավարվող «գրոհայինների ճամբարները», որի առաջնային

«գաղափարապաշտների կազմակերպությունների» (ülkücüler) կազմավորման աշխատանքներին: Ա. Թյուրքեշի կոչը թուրք երիտասարդներին՝ անզիջում պայքար սկսել կոմունիզմի դեմ, վերածվեց այս կառույցների գործունեության կարգախոսի:

Գաղափարապաշտների առաջին կազմակերպությունները հիմնադրվեցին 1966 թ. Անկարայի համալսարանում: Կարճ ժամանակ անց դրանց աշխարհագրությունն ընդլայնվեց. բացի Անկարայից, նմանատիպ կազմակերպություններ բացվեցին Ստամբուլում, Ադանայում, Տրապիզոնում, Կարսում, Սիվասում, Էրզրումում և այլուր (Sanlı 364): Արդեն 1980 թ. դրանց թիվը Թուրքիայում հասավ շուրջ 1200-ի, որոնց, որոշ տվյալներով, անդամագրված էին 200 հազար թուրք ազգայնական երիտասարդներ (Սաֆրաստյան 256): Առավել ազդեցիկ էին Գաղափարապաշտների օջախների կազմակերպությունը (Ülkü Ocakları Derneği, ÜOD), Գաղափարապաշտների ուղի միությունը (Ülkü Yol Birliği, ÜYB), Գաղափարապաշտների երիտասարդական կազմակերպությունը (Ülkü Genç Derneği, ÜGD)[1]:

Երիտասարդների շրջանում ազգայնականության տարածման և պանթյուրքիզմի գաղափարախոսություն սերմանելու նպատակով ԱՇԿ ղեկավարությունն ակտիվորեն ձեռնամուխ եղավ գաղափարապաշտների օջախներում դասընթացներ կազմակերպելու գործընթացին: Այդ նպատակով Ա. Թյուրքեշը, նրա օգնական Դյունդար Թաշերը, ԱՇԿ երիտասարդական թևի ղեկավար Սեդի Սոմունջուօղլուն և ԱՇԿ այլ ազդեցիկ անդամներ անձամբ լծվեցին այդ քարոզչական աշխատանքներին: Վերջիններս դասախոսություններ էին կարդում Թուրքիայում կրոնի, տարբեր գաղափարախոսությունների ձևավորման, թուրք ազգի պատմության, և որ ամենակարևորն է՝ կոմունիզմի դեմ պայքարի անհրաժեշտության վերաբերյալ (Erken 126): Կարծում ենք՝ չափազանց կարևոր էր նաև այն հանգամանքը, որ ԱՇԿ-ին հաջողվել էր թուրք ազգայնական երիտասարդներին համոզմունք և հավատ ներշնչել, որ իրենք Թուրքիայի փրկության միակ երաշխիքն են: Այդ գաղափարն իր արտացումը գտավ «Գաղափարապաշտների օջախների միության» հռչակագրում, որում մասնավորապես նշված էր. «Սա թուրք ազգի գոյության պայքարն է: Միայն գաղափարապաշտ թուրք երիտասարդությունը կկարողանա փրկել Թուրքիան» (Cinar 6): Կարող ենք փաստել, որ մի կողմից պետության հանդեպ հավատարմությունը, նրան ծառայելու կամքը, մյուս կողմից՝ բռնություն խրախուսող գործելակերպը գաղափարապաշտներն ընկալում էին որպես պետության պաշտպանություն «կոմունիստական սպառնալիքից»՝ ձախերին դիտարկելով որպես Թուրքիայի և ԱՇԿ-ի թշնամի:

«Գորշ գայլերի» ահաբեկչական գործունեությունը 1970-ական թթ.

Արդեն 1960-ական թթ. վերջին Թուրքիայի տարբեր վայրերում պանթյուրքիստական դաստիարակություն էին ստացել բազմաթիվ «գաղափարապաշտ» երիտասարդներ: Նրանք վստահ էին, որ «գաղափարապաշտ» լինել նշանակում է կատարել ոչ թե այն, ինչ տրամաբանությունն է հուշում, այլ այն, ինչ ղեկավարն է հրամայում՝ «ամեն ինչ զոհաբերելով հանուն գաղափարի»: Իսկ գաղափարը և տեսլականը Մեծ Թուրան պետությունն էր (Դումանյան 70):

1960-ական թթ. վերջից Թուրքիայի տարբեր ուսումնական հաստատություններ դարձան երկու հակադիր ճամբարների՝ ձախ և աջ գաղափարախոսությունների բախման թատերաբեմ: Ամեն օր կողմերից յուրաքանչյուրն անզիջում պայքար էր մղում

նպատակն էր Թուրքիայում ակտիվացող ձախերի՝ կոմունիստական շարժման դեմ պայքարը: Ճամբարներում ուսում ստացող երիտասարդներին կրթում էին թե՛ ֆիզիկապես, թե՛ գաղափարապես և թե՛ հոգեպես: Հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես «կոմանդոսների» գաղափարական պատրաստվածությանը (Աղամայան 106-117):

1 Գաղափարապաշտների մասին առավել մանրամասն տե՛ս M. Turhan 2010:

իրենց ֆակուլտետներում, հանրակացարաններում և այլ վայրերում վերահսկողություն սահմանելու համար: Արդեն 1970-ական թթ. «Գորշ գայլերը», բավարար չհամարելով կառավարության կողմից կոմունիստների դեմ ձեռնարկված քայլերը, չսահմանափակվելով ուսումնական հաստատություններով, հակամարտությունը տեղափոխեցին փողոց. սկսվեց ձախակողմյան շարժումների դեմ պայքարի ահաբեկչական և հրահրող գործողությունների փուլը: Ահաբեկչության իրականացման որոշումը կայացնում էր ԱՇԿ-ի ղեկավարությունը, որին անմիջապես հետևում էին կուսակցության երիտասարդական թևի և գաղափարապաշտների տեղական կազմակերպությունների ղեկավարների նախապատրաստական աշխատանքները: Վերջիններս երիտասարդ գրոհայիններին և գաղափարապաշտներին ապահովում էին զենք-զինամթերքով, իսկ հրամանն իրականացնելուց հետո դրանք ենթակա էին պարտադիր վերադարձի (Gourisse 67-68): ԱՇԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Յաշար Օքույանի գրասենյակի կողմից կազմված գաղտնի փաստաթուղթն անհերքելի ապացույց է ահաբեկչական գործողությունների կազմակերպչական աշխատանքներին կուսակցության ակտիվ ներգրավվածության: Այդ փաստաթղթում ամրագրված էին գաղտնի աշխատանքի համար օրինակելի կանոնները. «Բոլոր գործողությունները պետք է կազմակերպվեն այնպես, որ ներգրավված լինեն հնարավորինս քիչ թվով երիտասարդներ...: Ազգայնական զինյալների (militan) կարգապահության պայման էր, որ նրանք հետամուտ չլինեն, թե ինչին են ուղղված իրենց կատարած գործողությունները: Կարևոր պահանջ էր զինյալի հետախուզման կամ դատական վճռի առկայության պայմաններում վերջինիս թաքնվելը, իսկ ձերբակալվելու պարագայում՝ ռազմական գործունեության վերաբերյալ որևէ ցուցմունք չտալը (Iddianame (MHP ve Ülkücü kuruluşlar) 553-554):

«Գորշ գայլերի» ահաբեկչական գործողություններն էլ ավելի ակտիվացան 1970-ական թթ. կեսերից: 1975 թ. խորհրդարանական աջ ուժերի միասնությամբ (Արդարություն կուսակցություն, Ազգային փրկություն կուսակցություն, թուրք.՝ Milli Selamet Partisi, MSP, Ազգայնական շարժում կուսակցություն, Հանրապետական վստահություն կուսակցություն, թուրք.՝ Cumhuriyetçi Güven Partisi, CGP) ձևավորվեց Ազգայնական ճակատ (ԱՃ) կոալիցիոն կառավարությունը, իսկ Ա. Թյուրքեշը դարձավ փոխվարչապետ: Այս հանգամանքը կարևոր գործոն էր, որպեսզի ԱՇԿ առաջնորդն աջակցի իր կուսակիցների՝ պետական հաստատություններ, հատկապես ոստիկանական համակարգ, բանակ, ԱՀԿ (Ազգային հետախուզական կազմակերպություն, թրք.՝ Milli İstihbarat Teşkilâtı, MIT) ներթափանցմանը (Gümrükçü 218): Արդյունքում՝ «Գորշ գայլերի» ահաբեկչական գործողությունները շատ դեպքերում մնում էին անպատիժ, փոխարենը ոստիկանական բաժանմունքում էին հայտնվում հակառակ ճամբարի երիտասարդներ, որտեղ նրանցից շատերը ենթարկվում էին խոշտանգումների:

Հարկ է ընդգծել, որ ԱՃ կառավարության անդամները, որոնք որդեգրել էին ընդգծված հակաձախ դիրքորոշում, օգտագործում էին «Գորշ գայլերին» և շատ դեպքերում աջակցում ահաբեկչական գործողություններին: Գալով իշխանության բավական մեծ ընտրազանգվածով՝ Արդարություն կուսակցությունն այնուամենայնիվ ի զորու չէր փողոցային մարտերում հանդես գալ որպես հակակշիռ ձախ շարժմանը, ուստի դրսևորում էր «կիսաչեզոք վարքագիծ», ինչը կարելի է բնորոշել որպես «Գորշ գայլերին» հաճախ խրախուսելու, հանդուրժելու, արդարացնելու պատրաստակամություն: Այս համատեքստում չափազանց կարևոր էին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի տարբեր հայտարարությունները: Մասնավորապես 1976 թ. հուլիսին, ի պատասխան լրագրողի հարցին, Դեմիրելը համոզմունք հայտնեց, որ Թուրքիայում փողոցային մարտերի ողջ պատասխանատվությունը կրում են ձախակողմյան կազմակերպությունները, մինչդեռ «գաղափարապաշտ» երիտասարդների գործողությունները որակեց որպես հարկադրված ինքնապաշտպանություն (İpekçi):

1975-1977 թթ. ընթացքում Թուրքիայում ահաբեկչության տեմպերը շարունակեցին կայուն աճ գրանցել: Միայն 1977 թ. երկու հակադիր բևեռների բախումների հետևանքով զոհվեց 231 քաղաքացի (Hale 224): Այս ժամանակաշրջանում «Գորշ գայլերի» կազմակերպած ամենազանգվածային ահաբեկչական ու սադրիչ գործողությունը տեղի ունեցավ 1977 թ. մայիսի 1-ին: Աշխատավորության մայիսմեկյան տոնի կապակցությամբ ձախակողմյան կազմակերպությունների, մասնավորապես՝ Հեղափոխական աշխատավորական արհմիությունների համադաշնության (թրք.՝ DISK, Devrimci İşçi Sendikalar Konfederasyonu) կողմից Ստամբուլի Թաքսիմ հրապարակում կազմակերպվեց Թուրքիայի պատմության ամենամեծ ցույցը, որին մասնակցում էր գրեթե 500 հազար մարդ: Հանրահավաքի ժամանակ գաղափարապաշտ երիտասարդներն իրականացրին զինված հարձակում, որի ընթացքում զոհվեց 34, վիրավորվեց ավելի քան 100 մարդ (Yanardağ 92): 1977 թ. մայիսմեկյան բախումները Թուրքիայի պատմության մեջ մտան որպես «Արյունոտ երկրորդ կիրակի»: Հատկանշական է, որ հետագայում մի շարք քաղաքական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներ բավական ուշագրավ բացահայտումներ և տեղեկություններ հաղորդեցին մայիսմեկյան դեպքերի կապակցությամբ: Հանրապետական ժողովրդական կուսակցության (թուրք.՝ Cumhuriyet Halk Partisi, CHP)[1] նախագահ Բյուլենթ Էջևիթը, ինչպես նաև 1971 թ. Թուրքիայի փոխվարչապետ Սադի Քոչաշն իրենց հարցազրույցներում նշեցին, որ մայիսմեկյան արյունոտ դեպքերի հետևում կանգնած էին Հատուկ պատերազմի բաժինը և Ազգային հետախուզության կազմակերպությունը (Birand ve değ. 70-71, Hürriyet): Ուշադրության է արժանի հատկապես պաշտոնաթող փոխգնդապետ Թալաթ Թուրհանի այն տեսակետը, որ «1977 թ. հոկտեմբերին կայանալիք համապետական ընտրություններից առաջ անհրաժեշտ էր ահաբեկչական գործողություններով երկրում ձևավորել անկառավարելի և վախի մթնոլորտ, որին կհետևեր ռազմական հեղաշրջումը, ապա իշխանության զավթումը: Ուստի Թաքսիմի հրապարակում, եթե ԱՇԿ-ն կարողանար զոհերի թիվը հասցնել 300-ի, ապա 1980 թ. ռազմական հեղաշրջումը տեղի կունենար 3 տարի առաջ՝ 1977 թ.» (T. Turhan 63): Ի պատասխան բոլոր այս մեղադրանքների՝ Թյուրքեշը և ԱՇԿ այլ բարձրաստիճան ներկայացուցիչներ կտրականապես մերժում էին որևէ մասնակցություն Թաքսիմի հրապարակում տեղի ունեցած իրադարձություններին: Ավելին, Քահրամանմարաշի ԱՇԿ պատգամավոր Օքքեշ Քենգերը (Շենդիլլեր) մայիսմեկյան արյունալի դեպքերի ողջ պատասխանատվությունը վերագրեց ոչ միայն թուրքական ձախակողմյան կազմակերպություններին, այլև հայերին: Որպես ապացույց ներկայացվեց հայազգի Գարբիս Ալթընսօղլուի անհիմն մահապատժի դատավճիռը՝ մայիսմեկյան խռովությունների կազմակերպման մեղադրանքով: Նա նաև մահացածների շրջանում չթլփատված տղամարդկանց մարմինների առկայությունը բացատրում էր նրանց հայ լինելու իրողությամբ (Bahar 83) :

Մայիսմեկյան արյունալի դեպքերից անմիջապես հետո՝ 1977 թ. հունիսի 1-ին, ռազմական հեղաշրջում նախապատրաստելու համար բանակից հեռացվեցին Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար Նամըք Քեմալ Էրսունը և 850 բարձրաստիճան սպաներ, որոնցից շատերը ԱՇԿ կողմնակիցներ էին: Միաժամանակ մի շարք պաշտոնանկություններ տեղի ունեցան նաև ԱՀԿ համակարգում, որոնց թվում էին Ա. Թյուրքեշի ազգականները՝ իրավաբանական բաժնի պետ Շահափ Հոմրիշը և որդին՝ ՀՊԲ սպա, կապիտան Դավութ Հոմրիշը (Yanardağ 95):

1 Թուրքիայի Հանրապետական ժողովրդական կուսակցությունը ներկայացնում էր կենտրոնից ձախ քաղաքական ուղղությունը:

1977 թ. վերջից «Գորշ գայլերի» ահաբեկչական գործողություններն ավելի կատաղի բնույթ կրեցին և ենթարկվեցին մարտավարական որոշակի փոփոխությունների: Դա հիմնականում կապված էր 1978 թ. հունվարի 5-ի Էջևիթի երկրորդ կառավարության կազմավորման հետ: Սկսած այս ժամանակաշրջանից՝ ԱՇԿ-ի ահաբեկչական գործողությունները և բռնարարքներն ուղղված էին ոչ միայն ձախերի, այլև բոլոր շերտերի դեմ: Նման քաղաքականությամբ թուրք ազգայնականները նպատակ էին հետապնդում բռնությունը դարձնել առավել զանգվածային՝ այդպիսով ապակայունացնելով ներքին դրությունը: Երկրում գրանցվեց ահաբեկչության աննախադեպ ալիք. միայն 1978 թ. առաջին 2 ամիսների ընթացքում Թուրքիայում տեղի ունեցավ 319 պայթյուն (Yavan 95), 12 ամիսների ընթացքում բռնարարքների հետևանքով զոհվեց 832 քաղաքացի (Hale 224):

1978 թ. մարտի 16-ին «Գորշ գայլերը» Ստամբուլի համալսարանի դիմաց կազմակերպեցին պայթյուն, որի հետևանքով զոհվեց 7, վիրավորվեց 41 ուսանող: Հետագայում պայթյունի կազմակերպիչներից Զուլքլուֆ Իսոթը խոստովանեց, որ ահաբեկչության հրամանը Թյուրքեշն էր տվել, իսկ այն իրականացնելու հարցում օգնել էին որոշ ոստիկաններ (Դումանյան 76): ԱՇԿ և ոստիկանության որոշ բարձրաստիճան պաշտոնյաների կապը, ինչպես նաև վերջիններիս ներգրավվածությունն ահաբեկչությանը մի քանի օր անց ապացուցվեց Ստամբուլի ՊՈԼ-ԴԵՐ[1] մասնաճյուղի ղեկավար Քյազըմ Բիլիրի կողմից: Վերջինս 1978 թ. մարտի 22-ին հրավիրված մամլո ասուլիսին ներկայացրեց փաստաթուղթ, համաձայն որի՝ ոստիկանությունը նախազգուշական նամակով մեկ շաբաթ առաջ տեղեկացվել էր կազմակերպվող ահաբեկչության մասին (Milliyet 1978, 23 Mart): Այս հանգամանքը կարևոր վկայություն է, որ չնայած ԱՇԿ-ն այլևս մաս չէր կազմում կոալիցիոն կառավարությանը, այնուամենայնիվ շարունակում էր հմտորեն օգտագործել իր կապերը ուժային համակարգում:

1970-ական թթ. վերջին «Գորշ գայլերը» անցան կրոնաէթնիական պառակտում հրահրելուն՝ նման ճանապարհով փորձելով ստանալ զանգվածային աջակցություն և էլ ավելի խորացնելով երկրի քաղաքային իրավիճակը: Գաղափարապաշտները սադրիչ գործողություններ իրականացրին Թուրքիայի կենտրոնական, քրդաբնակ և ալևիաբնակ նահանգներում՝ սրելով առանց այն էլ լարված փոխհարաբերությունները սուննի ծայրահեղ իսլամական ուժերի հետ: Ալևիներին թիրախավորելու ռազմավարությունը պատահական չէր. վերջիններս 1970-ական թթ. սատարում էին կենտրոնից ձախ ուղղությունն ընտրած ՀԺԿ-ին և ակտիվ ներգրավված էին ձախակողմյան TİKKO (Türkiye İşçi Köylü Komunist Ordusu – Թուրքիայի աշխատավորական գյուղացիական կոմունիստական բանակ), TKPM-L (Türkiye Komunist Partisi Marksist Leninist – Թուրքիայի կոմունիստական կուսակցություն/մարքսիստ-լենինիստ), DEV-SOL (Devrimci Sol-Հեղափոխական ձախ) և այլ կազմակերպությունների (Leezenberg 199): Արդեն 1978 թ.-ից ալևիները երկրի տարբեր շրջաններում շարունակաբար բռնությունների և հարձակումների էին ենթարկվում սուննի արմատականների կողմից. շատ դեպքերում որոշ պետական հաստատություններ խրախուսում էին նման գործողությունները, խուսանավում կանխել այդ բռնարարքները կամ միջոցներ ձեռնարկել մեղավորներին պատժելու:

Առաջին խոշոր բախումները տեղի ունեցան 1978 թ. ապրիլին Մալաթիայում: Իրավիճակը դարձավ անկառավարելի, երբ նույն ամսի 17-ին սպանվեց աջակողմյան թևին հարող քաղաքապետ Համիդ Ֆենդոջլուն: Կատարվածի համար սուննի արմատականները մեղադրեցին ալևիներին: Հաջորդող երկու օրերի վայրագությունների ընթացքում այրվում և ավերվում են ալևիներին պատկանող

1 1973 թ. մի խումբ ոստիկաններ, որոնք հարում էրն ձախ կողմնորոշմանը, հիմնադրում են ՊՈԼ-ԴԵՐ (Polis Derneği) կազմակերպությունը:

բազմաթիվ աշխատավայրեր, բնակարաններ, զոհվում է ութ, վիրավորվում հարյուրից ավելի մարդ (Հարությունյան 113, Uzun 287): Հաջորդ բնակավայրը, որտեղ տեղի ունեցան սուննի-ալևի բախումներ, Սվազ քաղաքն էր: Ինչպես և Մալաթիայում, Սվազում նույնպես թալանի և ավերածությունների ենթարկվեցին ալևիներին պատկանող 1000-ից ավելի խանութներ, գրասենյակներ և բնակավայրեր: Բռնություններն իրենց գագաթնակետին հասան, երբ զինված մարդիկ ներխուժեցին մզկիթներից մեկի տարածք և կրակ բացեցին հավաքվածների վրա, ինչի հետևանքով զոհվեց 6, վիրավորվեց մի քանի հարյուր մարդ (Türkıye Basınında 1978-1980 yıllarında yaşanan Alevi katliamlarında dair manşet haberlerinin karşılıştırılması üzerıne bir inceleme 4):

Մալաթիայում և Սվազում տեղի ունեցած զանգվածային բռնություններն իրենց գագաթնակետին հասան Քահրամանմարաշում, որը Թուրքիայի պատմության ընթացքում ալևի և սուննի բնակչության մեջ ամենազանգվածային բախումն էր: 1978 թ. դեկտեմբերին Քահրամանմարաշում գտնվող կինոթատրոններից մեկում, երբ ցուցադրվում էր «Արևը երբ է ծագելու» հակակոմունիստական ֆիլմը, «Գորշ գայլերը» իրականացրին պայթյուն և դրանում մեղադրեցին ալևիներին: «Մարաշը դառնալու է ալևիների գերեզմանը» լոզունգով ծայրահեղականների մի քանի խմբեր հարձակվեցին ալևիաբնակ թաղամասերի վրա, ինչին առանց միջամտելու հետևում էր ոստիկանությունը: Բախումների ժամանակ աջ ծայրահեղականների բռնություններին զոհ դարձավ 120 ալևի, վիրավորվեց ավելի քան 1000 մարդ (Հարությունյան 117-118): Թուրքիայի նախագահ Քենան Էվերենը հետագայում Քահրամանմարաշի արյունալի դեպքերում մեղադրեց «Գորշ գայլերին»: Ի պատասխան այս մեղադրանքների՝ Ա. Թյուրքեշը հրավիրված մամլո ասուլիսին պնդեց, որ անհիմն են այն մեղադրանքները, որոնք հնչում են ԱՇԿ-ի հասցեին՝ ավելացնելով, որ իրենք նույնիսկ տուժող կողմ են (Bahar 81):

Քահրամանմարաշի դեպքերից անմիջապես հետո կառավարությունը խորհրդարան ներկայացրեց ռազմական դրություն հայտարարելու մասին բանաձևի նախագիծ: Արդյունքում Թուրքիայի 13 շրջաններում ռազմական դրություն հայտարարվեց, ինչը ԱՇԿ գլխավոր նպատակն էր:

Ռազմական դրության հայտարարումից հետո ևս երկու հակադիր ճամբարների բռնարարքները չնվազեցրին իրենց ուժգնությունը: Եթե նախկինում ձախերի և աջերի ահաբեկչության զոհ էին դառնում հակառակորդ խմբի անդամներ կամ հասարակ քաղաքացիներ, ապա այժմ նրանք սկսեցին թիրախավորել բարձրաստիճան պաշտոնյաների: 1980 թ. մայիսի 27-ին սպանվեց ԱՇԿ-ական բարձրաստիճան պաշտոնյա Գյուն Սազաքը, հունիսի 25-ին՝ ԱՇԿ Գազիոնփաշայի շրջանի նախագահ Ալի Ռըզա Ալթինքոյը, հուլիսի 19-ին՝ Թուրքիայի նախկին վարչապետ, անկուսակցական Նիհաթ Էրիմը, հուլիսի 22-ին՝ DISK նախկին ղեկավար Քեմալ Թյուրքլերը, խորհրդարանական պատգամավորներ, կուսակցական պաշտոնյաներ և այլք (Yavan 99):

Նման բարձրաստիճան պաշտոնյաների սպանությունից հետո բանակը երկրում կարգուկանոն հաստատելու մտադրությամբ 1980 թ. սեպտեմբերի 12-ին իրականացրեց ռազմական հեղաշրջում: Հեղաշրջման նախօրեին՝ սեպտեմբերի 11-ի երեկոյան, զինվորականները տանկերով շրջապատեցին ԱՇԿ գրասենյակը և ձերբակալեցին անդամներին: Չնայած կանխարգելիչ միջոցառումներին, այնուամենայնիվ, Ա. Թյուրքեշը, օգտագործելով իր կապերը, կարողացավ նախօրոք տեղեկություն ստանալ սպասվելիք հեղաշրջման մասին և փախուստի դիմեց: Միայն երեք օր անց, ամենայն հավանականությամբ երաշխիքներ ստանալով, նա հանձնվեց:

1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո Թուրքիայում չորս հիմնական կուսակցություններից (Հանրապետական ժողովրդական կուսակցություն, Արդարություն կուսակցություն, Ազգային փրկություն կուսակցություն, Ազգայնական շարժում կուսակցություն) ամենադաժան պատժամիջոցները կիրառվեցին

հատկապես Թյուրքեշի գլխավորած կուսակցության նկատմամբ: Թյուրքեշը դատապարտվեց 11 տարի, մեկ ամիս և 10 օր ազատազրկման (Դումանյան 80): Հեղաշրջումից հետո առաջին վեց շաբաթվա ընթացքում ձերբակալվեց 12.000 մարդ: 1980 թ. վերջին այդ թիվը հասել էր 30.000-ի (Yavan 100):

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով «Գորշ գայլերի» գործունեության ուսումնասիրությունը 1970-ական թթ.՝ կարելի է եզրակացնել, որ քննարկվող ժամանակաշրջանում ձախակողմյան ուժերի ակտիվացմանը խոչընդոտելու համար ԱՇԿ-ն օգտագործեց գաղափարապաշտ երիտասարդների՝ (որոնք իրապես գաղարարի մարտիկներ էին) որպես ահաբեկչություն և սադրիչ գործողություններ իրականացնողների: Ժամանակի ընթացքում Ա. Թյուրքեշը բռնության գործիքայնացումը կիրառեց ոչ միայն կոմունիստական գաղափարախոսության տարածման դեմ, այլև երկրում քաոսային իրավիճակ ստեղծելով՝ փորձեց հասնել իշխանության: Սակայն 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումն ի չիք դարձրեց «Գորշ գայլերի» նպատակը, ինչպես նաև կանխեց Թյուրքեշի՝ իշխանությունը զավթելու ծրագիրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղամալյան, Թամարա. «Պանթյուրքիստ գրոհայինները Թուրքիայում. «Կոմանդոսների ճամբարների» կազմավորման գործընթացը, նպատակը, գործունեությունը, (1968-1971 թթ.)», *Արևելագիտության հարցեր*, № 20, Երևան, 2021, էջ 106-117:
2. Դումանյան, Արթուր. *1980 թվականի ռազմական հեղաշրջումը. պատճառները, ընթացքը, հետևանքները*, Երևան, 2016:
3. Հարությունյան, Վարդան. *Թուրքիայի ալևիները. Պատմության և քաղաքականության հարցեր*, Երևան, 2013:
4. Սաֆրաստյան, Ռուբեն. «Возвращение “серых волков”: Консервативная партия в политической жизни Турции (1983-1985)», *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, XXIII, Երևան, 2004, էջ 254-276.
5. Cinar, Meral Ugur. “When Defense Becomes Offense: The Role of Threat Narratives in the Turkish Civil War of the 1970s.”, *Turkish Studies*, Vol. 15, Issue 1, 2014, p. 1-11, https://doi.org/10.1080/14683849.2014.891351
6. Erken, Ali. The Construction of Nationalist Politics in Turkey, The MHP 1965-1980, *PHD thesis*, University of Oxford, 2013.
7. Gourisse, Benjamın. “In the Name of the State. Nhe Nationalist Action Party (MHP) and the Genesis of Political Violence during the 1970s”, *Turkish Studies*, Vol. 23, Issue 1, 2022, p. 56-76, https://doi.org/10.1080/14683849.2021.1885295
8. Gümrükçü, Selın Bengi. “Ideology, Discourse, and Alliance Structures: Explaining Far-Right Political Violence in Turkey in the 1970s.”, *Terrorism and Political Violence*, Vol. 35, Issue 1, 2023, p. 210-224, https://doi.org/10.1080/09546553.2021.1895121
9. Hale, William. *Turkısh Politics and the Military*, London and New York, 1993.
10. Leezenberg, Michiel. “Kurdish Alevis and the Kurdish Nationalist Movement in the 1990s”, *Turkey’s Alevi Enigma*, Brill, Boston, 2003, p. 197-212.
11. Sayari, Sabri. "Political Violence and Terrorism in Turkey, 1976-1980: A Retrospective Analysis", *Terrorism and Political Violence*, Vol. 22, Issue 2, 2010, p. 198-215, http://dx.doi.org/10.1080/09546550903574438
12. Anadol, Cemal. *Alparslan Türkeş, Olaylar, Belgeler, Hatıralar, MHP ve Bozkurtlar*, İstanbul, 1995.
13. Bahar, İlhan. *Alparslan Türkeş ve Ülkücü Hareket, Türkeş ve Türk Gençliği*, İstanbul, 2011.
14. Birand, Mehmet Ali, ve değ. *12 Eylül, Türkiyenin Miladı*, İstanbul, 1999.

15. Cumhuriyet Senatosu, *14. Dönem 21*. Cilt 49. Birleşim, s. 478, https://www5.tbmm.gov.tr//develop/owa/td_v2.goruntule?sayfa_no_ilk=477&sayfa_no_son=480&sayfa_no=478&v_meclis=7&v_donem=14&v_yasama_yili=&v_cilt=21&v_birlesim=049, Erişim Tarihi: 18 Haz. 2023.

16. 1 Mayıs Olayı, *Hürriyet*, 8 Mayıs, 1987.

17. *Iddianame (MHP ve Ülkücü kuruluşlar), Ankara, Çankırı, Kastamonu illeri Sıkıyönetim Komutanlığı Askeri Savcılığı,* Ankara, 1981.

18. İpekçi, Abdi. Demirelin Cevapları, *Milliyet,* Temmuz 24, 1976.

19. Kıdal, Arzu Opçin. *Continuity and Change in the Ideology of the Nationalist Action Party (MHP), 1965-2015: From Alparslan Türkeş to Devlet Bahçeli,* Ph.Dissertation, Bilkent University, Ankara, 2020.

20. *Milliyet* 23 Mart, 1978.

21. Sanlı, Ferit Salim. *Cumhuriyetçi Köylü Millet Partisinden Milliyetçi Hareket Partisine Tarihsel Süreç, İdeoloji ve Politika,* Doktora Tezi, Ankara, 2017.

22. Tombuloğlu, Tuba. Alparslan Türkeşin Hayatı, *Doğumunun 100. Yılında Alparslan Türkeş'e Armağan,* Ankara, 2018, s. 9-24.

23. Turhan, Metin. *Ülkü Ocakları 1968-1980,* İstanbul, 2010.

24. Turhan, Talat. *Özel Savaş Terör ve Kontrgerilla*, İstanbul, 1992.

25. Türkeş*, Alparslan. Dokuz Işık,* İstanbul, 2010.

26. *Türkıye Basınında 1978-1980 yıllarında yaşanan Alevi katliamlarında dair manşet haberlerinin karşılıştırılması üzerıne bir inceleme,* Feza Erdendoğdu Mimar Sinan Güzel Sanatlar Üniversitesi, 22.12.2014.

27. Uzun, Turgay. *Türk milliyetçiliği ve MHP*, Ankara, 2005.

28. Yalçın, Habib. *Alparslan Türkeşin Bilinmeyen Anıları*, İstanbul, 2019.

29. Yanardağ, Merdan. *MHP Değişti mi? Ülkücü Hareketin Analitik Tarihi*, İstanbul, 2002.

30. Yavan, Mehmet Kürşad. Siyasal Şiddet, Terörizm ve Türkiye Örneği: 12 Eylül Süreci., *Türk Dünyası Araştırması*, Cilt 120, Sayı 237, s. 81-102.

WORKS CITED

1. Aghamalyan, T'amara. Pant'yurqist grohayinnery' T'urqiayum. «Komandosneri twambarneri» kazmavorman gorc'y'nt'acy', npataky', gorc'uneut'yuny', (1968-1971 t't'), Arevelagitut'yan harcer, №20, Erevan, 2021, e'j 106-117 [Panturkist Militants in Turkey: the Process of Formulation, Aims, Activity of the Camps of Commandos] 2021 (In Armenian)

2. Dumanyan, Art'ur. 1980 t'vakani r'azmakan heghashrjumy'.pattwar'nery', y'nt'acqy', hetevanqnery', Erevan, 2016 [The Military Coup in Turkey in 1980: Reasons, Process, and Consequence] 2016 (In Armenian)

3. Harut'yunyan, Vardan. T'urqiayi alevinery'. Patmut'yan ev qaghaqakanut'yan harcer, Erevan, 2013 [The Alevis of Turkey: history and policy issues] 2013 (In Armenian)

4. Safrastyan, R'uben. Vozvrashhenye “seryyh volkov”: Konservatyvnaja partyja v polytycheskoj zhyzny Turcyy (1983-1985), Merd'avor ev Mijin Arevelqi erkrner ev jhoghovurdner, XXIII, Erevan, 2004, e'j 254-276 [The Return of “Grey Wolves: Conservative Party in Turkish Politics (1983-1985)] 2004 (In Russian)

«GREY WOLVES» TERRORIST ACTIVITIES IN TURKEY DURING THE 1970s: SUPPORTING PAN-TURKISM AND OPPOSING COMMUNISM

TAMARA AGHAMALYAN
Armenian National Academy of Sciences, Institute of Oriental Studies,
Department of Turkey, Employee, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to cover the 1970s in Turkey. The primary target of "Grey Wolves" terrorist activities, particularly that of the Party of Nationalist Movement and the young organizations it controls, is the ongoing operation of communist organizations.

The task of this article is to show the Party of Nationalist Movement's direct involvement in terrorist activities during the time period under review, exposing the party's true motivations, the context, and the effects of this activity, demonstrating the impact of its ideology on Turkish nationalist youth, and emphasizing among these youth the significance of the Nationalist Movement party.

The methods of joint study of party documents, multilingual scientific analysis, the press, as well as materials related to the topic, and historical and analytical principles are used in the article.

According to the research, the National Movement Party, led by Türkeş, first used youth organizations under its control to prevent the growth of left-wing forces in the country. But over time, the "Grey Wolf" leader employed violence as a tool not just to stop the spread of communist ideas but also to try to seize control of the country by causing chaos.

Keywords: *Türkeş, NAP, pan-turkism, communism, «Grey Wolves», terrorism, nationalism*.

ТЕРРОРИСТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ «СЕРЫХ ВОЛКОВ» В ТУРЦИИ В 1970-Х ГГ. ЗА ПАНТЮРКИЗМ ПРОТИВ КОММУНИЗМА

ТАМАРА АГАМАЛЯН
сотрудник и соискатель отдела Турции Института Востоковедения
Национальной академии наук Республики Армения
г. Ереван, Республика Армения

Целью данной статьи является представление террористической деятельности «Серые волки», в частности, партии Националистического движения и молодежных союзов, находящихся под влиянием этой организации, направленной против активной деятельности коммунистических организаций в 1970-х гг.

Для достижения данной цели мы поставили перед собой задачу показать прямую вовлеченность партии Националистического движения, исповедующую турецкую националистическую экстремистскую-пантюркистскую идеологию, в террористических действиях, выделить реальные мотивы, предпосылки и последствия этих действий в данный период, показать влияние этой идеологии в

среде национальной турецкой молодежи, а также осветить их важность для партии Националистического движения.

Исследование проведено основании партийных документов, разноязычных научных аналтических данных, прессы, а также при использовании методов совместного изучения материалов, относящихся к теме; применялся также историко-аналитический принцип.

В результате проведенного исследования сделан вывод о том, что на первом этапе своей деятельности ПНД под предводительством А. Тюркеша привлекла действующие молодежные организации, находящиеся под ее влиянием, против распространения левых сил в стране. Однако с течением времени, руководитель «Серых волков» использовал инструменты насилия не только против распространения коммунистической идеологии, но и для захвата власти, создавая хаос в стране.

Ключевые слова: *Тюркеш, ПНД, пантюркизм, коммунизм, «Серые волки», терроризм, национализм.*